Երիտասարդությունը ամրացնել գյուղում

Քաշաթուխպի ծվեները՝ խըրտնած ձմեռային արևի ծույլ շողերից, լիզելով սևաթույր ցեղերը, աշնանացան արտերի կանաչ գորգերն ու քարավեժ ձորերը, բարձրացան Տողասարի անտառածածկ գագաթը և հետզհետե անէացան երկնի լազուրում: Ներքևում անուշ ու հանդարտ ծորում է Իշխանագետի ջրերի անվերջ երգ-շարականը:

Առավոտյան Ազոխը մեզ դիմավորեց իրեն հատուկ ջերմությամբ: Իմ առաջին զրուցակիցը Ազոխի գյուղական սովետի գործկոմի նախագահ Լևոն Ասրյանն էր: Մասնագիտությամբ ուսուցիչ է, մաթեմատիկա էր դասավանդում գյուղի միջնակարգ դպրոցում: Տեղական սովետների վերջին ընտրությունների ժամանակ հանրագրությունները դպրոցից «խլեցին» գյուղի հոգևորով ապրող երիտասարդ մանկավարժին ու կարգեցին իրենց գյուղական սովետի գործկոմի նախագահ:

Կուսակցությունը վերակառուցման ակտիվ և նախաձեռնող ուժ է համարում երիտասարդությունը և պահանջում է մատաղ սերընդի նկատմամբ ունենալ ուժեղ, ամբողջական պետական քաղաքականություն, այնպիսի պայմաններ ստեղծող քաղաքականություն, որոնք երիտասարդներին հնարավորություն ընձեռեին որքան կարելի է շուտ ձեռք բերել ինքնուրույնություն, առավելագույն չափով բացահայտել իրենց ընդունակությունները, ավելի լավ նախապատրաստվել նրան, որ ժամանակին տնտեսական, քաղաքական և բարոյական պատասխանատվություն ստանձնեն երկրի բախտի համար, սոցիալիզմի բախտի համար:

—Ազոխի երիտասարդությունը,— ասաց Լ. Ասրյանը,—պաշտպանում է դեմոկրատացման սկսված պրոցեսի ոգին, ուղղվածությունը, նրա վեհ նպատակները ու գաղափարները: Մեր պրակտիկ գործունեության մեջ այսօր մենք բարձր ենք կարևորում ինչպես ամբողջ գյուղի, այնպես էլ երիտասարդության սոցիալական զարգացման հարցերը:

Այո, կյանքը ամեն պահ իր մանր ու մեծ սեղմումներն ու բարդություններն է հրամցնում մարդկանց, գցում այնպիսի հողմապտույտների մեջ, որ դժվար է լինում պահել հավասարակշռությունը: Եվ, ինչպես հաստատեց գործկոմի նախագահը, լքճացման տարիներին այդ «սեղմումներից» ինչ-որ տեղ կծկվեց նաև Ազոխը: Տարբեր առիթներով գյուղից հեռացան պատկառելի թվով ընտանիքներ և առանձին երիտասարդներ: Արդյունքում եղավ այն, որ այսօր գյուղում թափուր տների թիվը հասնում է 45-ի: Սակայն ամենինչ չէ, որ համապատասխանել է գյուղից հեռացածների իդեալին, գեղեցիկ պատկերացումներին: Թերևս դրա պատճառով է, որ գյուղից հեռացած «խիզախներից» շատերը այսօր թևաթափ են լինում, հիասթափվում, ի տես բոլորի կամ ներքուստ որոշում գյուղ վերադառնալ:

Այնուամենայնիվ, Ազոխը չտուժեց իրենից հեռացածների պատճառով: Գյուղի նորակառույց տները (վերջին 8-10 տարում դրանց թիվն անցել է 40-ից) այսօր աչք են շոյում իրենց ընդարձակ տնամերձ հողամասերով, ուր անպակաս են տանձն ու խնձորը, խաղողն ու թուզը:

Ում նախանձը չեն կարող շարժել ավտովարորդ Նադիր Ասրյանի, դերձակ Էդգար Բալասանյանի, շինարար Նիկոլայ Պողոսյանի, բանվոր Սերժ Ազատխանյանի և ուրիշների Խընձորին բաղ կոչվող տեղամասում կառուցած շքեղ երկհարկանի առանձնատները:

Ազոխին ընդհանրապես հարատևելու մեծ իրավունք են ընձեռում նրա 720-ի հասնող մեծ ու փոքր բնակիչները, առանձնապես նրա երիտասարդությունը, որով գյուղը Հադրութի շրջանում կարող է զիջել միայն Մեծ Թաղլարին: Ազոխցիները հիացմունքով են խոսում իրենց գյուղում խորարմատներ ձգած օրինակելի գերդաստանների մասին:

Ամենալավ երկինքը Ազոխինն է, երևի այդպես են մտածել Մեծ հայրենականի վետերան Գուրգեն Ասրյանի որդիներ Լենները, Նադիրը, Էդգարն ու Արթուրը, որ հոր օրինակով ամրացել են գյուղում: Լենները կապալային եղանակով խոշոր եղջերավորների մսատաշներ է բրտում, Նադիրն ու Էդգարը ավտովարորդներ են, իսկ Արթուրը՝ բանվոր, Ասրյանների գերդաստանը ամուր դաշն ունի կրնքած հայրենի եզերքի, նրա հանդ ու անդաստանի հետ: Դեռ կանաչ են այդ տոհմածառի ճյուղերը:

Ապրելու, ուրիշներին ապրեցնելու տենչ-ձգտումը ամուր ողնաշար, հիմք ու պատվանդան ունի նաև աշխատանքի և պատերազմի վետերաններ Սերգեյ Դալլաքյանի և Թեմուր Ավանեսյանի բազմազավակ ընտանիքներում:

ՈՐ ՀՈԳՍԵՐԻՆ

ՀՈԳՍԵՐ ՉԳՈՒՄԱՐՎԵՆ

Տարիներ շարունակ անմշակ մնալուց ամուլ դարձավ Ազոխի տեղամասի Միշկերակ հանդի երբեմնի արգավանդ մեծ հողատարածությունը: Այդ Սերգեյ Դալլաքյանն էր, որ Խուդյակովի (Խանփերյանցի) անվան սովխոզի ղեկավարության առաջ հարց բարձրացրեց ձեռնամուխ լինել «փտպանի» յուրացմանը: Ստեղծվեց ութ հոգուց բաղկացած բրիգադ, բրիգադավար կարգվեց նախաձեռնության հեղինակ Սերգեյ Դալլաքյանը: Աշխատելով կապալային եղանակով, բրիգադայինները 1987-ին յուրացրին ավելի քան 60 հեկտար հողատարածություն, որը առատ ցորենով, եգիպտացորենով ու կերաբանկենդեղով վարձահատույց եղավ իր մշակներին: Կապալայինները շարունակում են թփերից և մացառներից ազատել մընացած 60 հեկտարը: Հոր հետ խոպան հողեր են յուրացնում Վալերին և Յուրին:

Մարդկանց համար շնորհակալ աշխատանք են կատարում Թեմուր Ավանեսյանի որդիները, Գեորգին գյուղական սովետի գործկոմի քարտուղար է, Յաշան անտառտեխնիկ է, իսկ Սոկրատը՝ միլիցիայի տեղամասային տեսուչ:

Սովխոզում նորովի են մտածում և գործում երիտասարդները: Սակայն, ինչպես նշեցին սովխոզի կուսկոմիտեի քարտուղար Վյաչեսլավ Մելքումյանը, Ազոխի տեղամասային կուսկազմակերպության քարտուղար Զեյնալ Արզումանյանը, որպեսզի նոր հատիկները չկորչեն հին դոգմատիկ մոտեցումների փոթորկահույզ ծովում, անհրաժեշտ է մշտական ուշադրության կենտրոնում պահել երիտասարդության հուզող պրոբլեմները:

Դժվար է ասել, թե մարդիկ, առանձնապես երիտասարդները, սիրով ու հաճույքով են օգտվում գյուղում գործող կենցաղային օբյեկտների ծառայություններից: Հագուստի անհատական կարման երկու կետերը, վարսավիրանոցը, կոշկի նորոգման արհեստանոցը տեղավորված են տարբեր տեղերում: Ցանկալի է, որ դրանք հավաքվեն մի հարկի տակ: Կենցաղի տուն ունենալը, իհարկե, ոչ միայն երիտասարդ տնտեսուհիների, պատանիների ու աղջիկների, այլև կենցաղապաշտկնոջներ Էդգար Բալասանյանի, Ռոզա Գրիգորյանի (դերձակներ), Վիտալի Դալլաքյանի (վարսավիր), Էդիկ Ավանեսյանի (կոշկակար), Արկադի Ավագյանի (հեակցող) ցանկությունն է, որոնք իրավացիորեն դժգոհում են իրենց աշխատանքային պայմաններից:

Աններելի է, որ պատկառելի բնակչություն ունեցող Ազոխը մինչ օրս չունի բուժկետի հարմար շենք: Նման օբյեկտի շինարարության մասին շրջսովետի գործկոմն ունի հատուկ որոշում, բայց գործը տեղից չի շարժվում: Հասկանալի չէ, որ գյուղի բուժակ Զեյնալ Արզումանյանը մարդկանց բժշկական սպասարկումը տարիներ շարունակ իրականացնում է մի խարխուլ մասնավոր տան անհյուրընկալ պատերի ներսում:

Երիտասարդական համագիր ունենալու հույսերն էին փայփայում գյուղի պատանիներն ու աղջիկները, երբ 1985-ին գյուղում սկսվեց այդ օբյեկտի շինարարությունը: Սակայն համապատասխան շինանյութերի բացակայության պատճառով դադարեցվել են աշխատանքները: Նույն վիճակում է դպրոցական շենքի շինարարությունը:

Իհարկե, գյուղի մարդկանց համար մեծագույն երջանկություն կլինի, եթե տեղական, շրջանային և մարզային իրավասու կազմակերպությունները իրենց հոգածության առարկա դարձնեն նաև Իշխանագետից գյուղ բարձրացող միակ ջրատարի նորոգման հարցը, ջրատար, որ կառուցվել է ավելի քան երկու տասնյակ տարի առաջ:

Ս. ԻՇԽԱՆԵՑԱՆ